Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԲԵՌՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է ավտոբուսներով ուղևորների և ուղեբեռների միջպետական կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ ավտոբուսային/միկրոավտոբուսային երթուղիների համար՝

Հ/Հ	Երթուղու				Անհրաժեշտ ավտոբուսների թիվը	
	անվանումը	սկզբնակետը (ավտոկայան, ավտոկայարան)	վերջնակետը (ավտոկայան, ավտոկայարան)	տեսակը	Փաստացի	պահուս-տային
Դեպի Վրաստան						
1	Երևան-Բավրա-Բաթումի	Երևանի <<Կենտրոնական>> ԱԿ	Բաթումի ԱԿ	ավտոբուսային	2	1
2	Երևան-Բավրա-Ախալքալակի	Երևանի <<Կենտրոնական>> ԱԿ	Ախալքալակի ԱԿ	միկրոավտոբուսային	3	1
Դեպի Ռուսաստանի Դաշնություն						
1	Երևան-Մոսկվա	Երևանի <<Կենտրոնական>> ԱԿ	Մոսկվա ԱԿ	ավտոբուսային	2	1
2	Երևան-Տվեր	Երևանի <<Կենտրոնական>> ԱԿ	Տվեր ԱԿ	ավտոբուսային	2	1
3	Գավառ-Չելյաբինսկ	Երևանի <<Կենտրոնական>> ԱԿ	Չելյաբինսկ ԱԿ	ավտոբուսային	2	1
Դեպի Իրանի Իսլամական Հանրապետություն						
1	Երևան-Թեհրան	Երևանի <<Կենտրոնական>> ԱԿ	Թեհրան ԱԿ	ավտոբուսային	2	1
Դեպի Արցախի Հանրապետություն						
1	Երևան-Ստեփանակերտ	Երևանի <<Կենտրոնական>> ԱԿ	Ստեփանակերտի ԱԿ	միկրոավտոբուսային	2	1
2	Երևան-Մարտակերտ	Երևանի <<Կենտրոնական>> ԱԿ	Մարտակերտի ԱԿ	միկրոավտոբուսային	1	1
3	Երևան-Մարտունի	Երևանի <<Կենտրոնական>> ԱԿ	Մարտունու ԱԿ	միկրոավտոբուսային	1	1

Ց Ա Ն Կ
ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1) Հայտ.
2) ավտոբուսների հաշվառման վկայագրեր.
3) ավտոբուսներին ամրակցված վարորդների վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային պայմանագրեր կամ քաղվածք հրամանից, աշխատանքային գրքույկներ.
4) ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
5) սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ անվտանգության պահանջներին ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված գազաբալոնային սարքավորման համապատասխանության վկայագրման վկայական և ավտոտրանսպորտային միջոցի վրա

տեղադրված բալոնների վկայագրման և գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկման վկայական.

6) փակ ծրարով ներկայացվող՝ երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի փոխադրման գինը.
7) տեղեկանք տարածքային հարկային մարմնից:

Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը՝ ***2023 թվականի հուլիսի 24-ին ժամը 11^{00}-ին, ք. Երևան, Հյուսիսային ավտոկայարան:***

Հայտը ներկայացնելու վայրը, օրերը, ժամերը, վերջին ժամկետը՝
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10^{00}-ից մինչև 17^{00}-ն, մինչև 2023 թվականի հուլիսի 19-ը:

Հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար-010-511356: